Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Գեղիի Յու. Երիցյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզու (5 դասաժամ), ինֆորմատիկա (7 դասաժամ) և տեխնոլոգիա /տղաների (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում ՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար ՝ 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչև 10.05.2024թ ներառյալ**, ամեն օր ժամը 10:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **մայիսի 16-ին՝ ժամը 14:00-ին,** Կոտայքի մարզի Նոր Գեղիի Յու. Երիցյանի անվան № 2 միջնակարգ դպրոցում: Հասցե՝ գյուղ Նոր Գեղի, Ց. Ղազարյան 35: Հեռախոս՝ 093 38 54 97